

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

Երրորդ հաղորդում

**Հոգևոր սկզբունքները, կյանքի դասերը և սուրբ նախազգուշացումները,
որոնք տեսնում ենք Սամուելի պատմության մեջ**

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 1:10-11, 18-20, 27-28, 2:30, 35-36, 3:1-21,
4:11-22, 7:3-17, 12:23

**I. Սամուելը Ղեղի ցեղից էր (Ա Մնց 6:33-38), բայց ոչ Ահարոնի տնից՝ Աստծու
նշանակած քահանաների ընտանիքից. Սամուելը Տիրոջը սպասավորում էր
ոչ թե որպես ի ծնե քահանա, այլ ուխտավորի ուխտով.**

- Ա. Աննայի աղոթքին պատասխանելիս Աստծու շարժումը կապված էր հաղթող ուխտավոր առաջացնելու հետ, ով բացարձակապես Աստծու ցանկության իրագործման համար էր. Սամուելը նույնիսկ մինչև իր ծնվելն իր մոր կողմից նվիրաբերվեց այդպիսի անձ լինելու՝ Ա Թգ 1:10-11, 18-20:
- Բ. Աստված ցանկանում է, որ Իր բոլոր մարդիկ ուխտավորներ լինեն. ուխտավոր լինել նշանակում է սրբացվել, առանձնացվել, բացարձակապես և վերջնականապես լինել Աստծու համար, այսինքն՝ նախատեսվել բացառապես Աստծու համար և բացառապես Աստծու բավարարության համար՝ Հիսուսի վկայության, որը վկայող եկեղեցին է որպես Քրիստոսի վկայությունը և արտահայտությունը՝ Թվշ 6:1-2, Սղմ 73:25-26, Հյտ 1:2, 9-13, 19:10, հմմտ Ելց 38:21.
1. Այն, որ ուխտավորը գինուց և դրա աղբյուրի հետ կապված ամեն ինչից ձեռնպահ էր մնում, խորհրդապատկերում է բոլոր տեսակի երկուային վայելքներից ու հաճույքներից ձեռնպահ մնալը և Քրիստոսին՝ որպես իր վայելքի և հաճույքի, ընդունելն ու փորձառարար ապրելը. կյանքի ծառն ուտելը, այսինքն՝ Քրիստոսին որպես կյանքի մատակարարման, վայելելը, պետք է եկեղեցական կյանքի առաջնային բանը լինի՝ Թվշ 6:3-4, Հյտ 2:7, Դտվ 9:12-13:
 2. Այն, որ ուխտավորը գլուխը չէր սափրում, խորհրդապատկերում է Տիրոջ գլխավորությունը չմերժելը, և դրան, ինչպես նաև Աստծու նշանակած իշխանության բոլոր ներկայացուցիչներին՝ բացարձակապես ներարկվելը՝ Թվշ 6:5, Հոմ 13:1-2ա, Եփս 5:21, 23, 6:1, Եքր 13:17, Ա Պտ 5:5:
 3. Այն, որ ուխտավորն իր արյունակից հարազատների մահով չէր պղծվում, այլ մնում էր իր առանձնացման վիճակում՝ հանուն Աստծու սուրբ լինելու համար, նշանակում է, որ ուխտավորը հաղթահարում է բնական կապվածությունը՝ Թվշ 6:7:
 4. Այն, որ ուխտավորը չէր մոտենում մեռածին կամ չէր պղծվում իր կողքին եղող մեկի հանկարծակի մահով, նշանակում է, որ ուխտավորն առանձնացված է մահից՝ խիս. 6-9, Հյտ 3:4, Դտվ 11:31, 5:2, հմմտ Ա Հվի 5:16:

ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- II. Սամուելի ժամանակ Ահարոնի տան քահանայությունը ծայրաստիճան ընկած էր. Աստված, սակայն, կանխատեսել էր իրավիճակը. բացի այն բանից, որ Ահարոնի տանը նշանակեց քահանաներ լինելու, Նա մի լրացում արեց՝ Թվոց 6-րդ գլխի ուստավորի ուստոք՝ կանխատեսելով նշանակված քահանաների ոչ պատշաճ լինելու հավանականությունը.**
- Ա. Երբ Ահարոնի տունն ընկապ, այս լրացումը սկսվեց գործնականորեն օգտագործվել. Սամուելը քահանա դարձավ՝ նվիրաբերվելով, առանձնանալով և Տիրոջը փոխ տրվելով՝ Ա Թօ 1:11, 27-28:
- Բ. Հեղիի ժամանակ Աստված քահանայության առումով աղքատ էր, ուստի Աննան Սամուելին փոխ տվեց Տիրոջը. Երբ իրավիճակն անկանոն է, Տերն Իր կառավարման առումով դառնում է աղքատ, և կարիք է լինում, որ ինչ-որ մեկն իրեն կամավորաբար փոխ տա Տիրոջը:
- Գ. Աննան, այն բանից հետո, երբ Սամուելին ներկայացրեց Հեղիին, փառաբանեց Աստծուն Նրա փրկության համար, որն իրականացվում է Նրա սքանչելի գործերով. Նրա աղոռքը կապված էր Աստծու տնտեսության մեջ Նրա շարժմելու հետ և ցույց էր տալիս, որ նա Աստծու տնտեսության հետ կապված ինչ-որ բան գիտակցում էր՝ 2:1-10:
- III. Սամուելը Հեղիի խնամակալության ներքո մեծացավ. Սամուելն իր պատանեկության տարիներին Հեղիի առջև սպասավորում էր Եհովային (Խխ. 11թ, 18-19). Հեղին նրան սովորեցնում էր Աստծուն սպասավորելու ճանապարհը.**
- Ա. Աստված երեք անգամ կանչեց Սամուելին. «Այդժամ Հեղին գիտակցեց, որ Եհովան էր կանչում տղային: Եվ Հեղին Սամուելին ասաց. Գնա և պառկիր, ու եթե Նա կանչի քեզ, ասա. Խոսիր, օ՝, Եհովա, քանի որ Ձո՞ն ծառան լսում է.... Այդժամ Եհովան եկավ և կողքը կանգնեց ու կանչեց ինչպես նախորդ անգամներին. Սամուել, Սամուել, Սամուել: Եվ Սամուելն ասաց. Խոսիր, քանի որ Ձո՞ն ծառան լսում է»՝ 3:1-10.
1. Սա բացարձակապես դրական բան էր, որ Սամուելը Հեղիից սովորեց. որպես Տիրոջ ծառամեր՝ մենք պետք է մեր հաղորդակցությունը Նրա հետ պահպանենք՝ միշտ լսելով Նրան՝ Ղկս 1:34-38, 10:38-42:
 2. Մեր կյանքը կախված է Տիրոջ խոսքերից, իսկ մեր աշխատանքը կախված է Նրա պատվիրաններից (Հյտ 2:7, Ա Թօ 3:9-10, տես Եսյ 50:4-5, Ելց 21:6). հավատացյալների կյանքն ամբողջովին կախված է Տիրոջ խոսելուց՝ Եկս 5:26-27:
 3. Տիրոջ խոսելը մեզ Իր հավիտենական տնտեսության նպատակն իրագործելու հնարավորություն է տալիս, այն է՝ ձեռք բերել հարսին՝ որպես Իր գույզի՝ Հյտ 2:7, Եկս 5:26-27, Երգ 8:13-14:
- Բ. Մինչ Սամուելը սովորում էր, նա զննում էր դեգրադացված ահարոնյան քահանայության անկումը.
1. Նա տեսավ, որ ժողովրդի երեցներն իրենց շահերին էին ծառայեցնում Աստծու տապանակը, իսկ փոշտացիները գերեվարել էին այն, որի պատճառով Աստծու փառքը հեռացավ Խրայելից. նա գիտակ-

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

ցեց Աստծու խիստ դատաստանը Հեղիի տան վրա, որը ներառում էր Հեղիի և նրա երկու չար որդիների՝ Ոփնիի և Փենեհեսի մահը՝ Ա Թգ 2:12-36, 4:11-22:

2. Հեղիի տան վրա Աստծու խիստ դատաստանի մասին Աստծու մարդը մարգարեացավ (2:27-36). այսուհետև այս խիստ դատաստանը հաստատվեց Սամուելի միջոցով Եհովայի ասած խոսքով՝ 3:11-18:
3. Սամուելի միջոցով Հեղիին զալիք դատաստանի մասին հայտնելով՝ Աստված հավանաբար այս երիտասարդ քահանայական տղայի վրա անմոռանալի տպավորություն բռնելու նպատակ էր հետապնդում. սա Աստծու իմաստությունն էր՝ խս. 17-18:
4. Դա Սամուելն իր ապագա ուխտավորի քահանայության առումով չքուլացրեց. ընդհակառակը, դա նրա համար իր քահանայական ծառայության ընթացքում մշտական նախազգուշացում դարձավ, որը նրան օգնեց իր ողջ կյանքի ընթացքում Աստծուն ծառայելիս մարուր մնալու:

IV. Սամուելը մեկն էր, ով այդ դարաշրջանը փոխեց՝ բերելով թագավորի թագավորման դարաշրջանը. դա մեծ իրադարձություն էր ոչ միայն Իսրայելի, այլև մարդկության պատմության մեջ.

- Ա. Սամուելն Ահարոնի տան դեմ շապստամբեց և Ահարոնի տնից որևէ բան չզավթեց. երբ Սամուելը մեծանում էր, Աստված իրավիճակ էր ստեղծում՝ նրան կատարելագործելու և նրան ընդունակ դարձնելու, որ աներ այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, որ Աստված փոխեր դարաշրջանը, բերեր թագավորությամբ թագավորի դարաշրջանը:
- Բ. Որպես քահանա՝ Սամուելը փոխարինեց հնացած ահարոնյան քահանայությանը և ինչ-որ իմաստով դադարեցրեց այն. Աստված օգտագործեց Սամուելին՝ դարաշրջանը ոչ թե ապստամբության կամ հեղաշրջման միջոցով փոխելու համար, այլ աստվածային հայտնության ճանապարհով թագավորությունը բերելու:
- Գ. Սամուելը հայտնության մարդ էր, և նա ամեն ինչ անում էր իր տեսածի համաձայն. «Եհովան հայտնվեց Սամուելին.... Եհովայի խոսքով» (խ. 21). բացի դրանից՝ Սամուելը մի մարդ էր, ով Աստծու սրտի համաձայն էր, Աստծու սրտի պատճենն էր, կրկնօրինակը. այսպիսի անձ լինելով՝ նա երբեք չէր ապստամբի:

V. Սամուելի ոչ միայն արածը, ապրելակերպը և աշխատանքը, այլև ողջ էությունը և անձը Աստծու համաձայն էին. Սամուելի էությունը և Աստծու սիրտը մեկ էին. այդ պատճառով կարելի է ասել, որ Սամուելը՝ մարդ, ով Աստծու համաձայն էր, երկրի վրա Աստծու պաշտոնակատարն էր.

- Ա. Աստծու միտքը Սամուելի խորհրդածելու նյութն էր. նա այլ միտք, խորհրդածելու կամ մտածելու այլ նյութ չուներ. նրա ապրելն ու աշխատելն Աստծու սրտում եղածն իրականացնելու համար էին:
- Բ. Սամուելը Սավուղին և Դավթին օծեց՝ թագավորներ լինելու (10:1, 16:1,

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- 13). Աստծու սահմանածի համաձայն էր, որ Սամուելը պետք է շարունակ Նրա օծյալի առջևից գնար (2:35), որպեսզի վերահսկեր թագավորին՝ հետևելով թագավորի արածներին:
- Գ. Սա ցույց է տալիս, որ Սամուելը՝ երկրի վրա Աստծու պաշտոնակատարը, ավելի մեծ էր, քան թագավորը. Սամուելը կարողացավ այդչափ որակավորվել, քանի որ երկար տարիներ Աստված նրան կատարելագործում էր թացառապես Իր տնտեսության համար.
1. Աստված կարողացավ Սամուելին օգտագործել Իր տնտեսությունն իրականացնելու համար, քանի որ նա Աստծու համաձայն և Աստծու սրտի համաձայն եղող մարդ էր և ոչ իր շահն էր փնտրում, ոչ էլ սեփական օգուտի մասին մտածում՝ հմմտ Մտք 16:24-26, Ղկս 9:23-25:
 2. Նրան ոչինչ չէր հետաքրքրում՝ բացի Աստծու սրտից և Աստծու լնտրյալներից. նրա սիրտն Աստծու սրտի արտացոլումն էր՝ հմմտ Փլա 2:19-22, Բ Կրք 3:16-18:
 3. Սամուելը համարում էր, որ Աստծու ժողովրդի համար չաղոթելը, որը Նրա անձնական զանձը և ունեցվածքն էր, Եհովայի դեմ մեղք էր՝ Ա Թգ 12:23, Ելց 19:5:
- Դ. Թեև Սամուելի համար հեշտ չէր իր հատուկ միջավայրում Աստծու կողմը կանգնել, նա հոգ էր տաճում Աստծու շահերի համար և փոխեց դարաշրջանը. ըստ Հին Կտակարանի՝ Սամուելն Աստծու համար և Աստծու շահերի համար լինելու առումով Մովսեսի հետ մի շարքի է դասվում՝ Երմ 15:1:
- Ե. «Սամուելը ժողովրդին պատմեց թագավորության կիրարկությունը, և նա այն գրեց գրքում և դրեց Եհովայի առջև»՝ Ա Թգ 10:25ա.
1. Մովսեսն Իսրայելի զավակներին տվեց օրենքը, բայց մինչ Սամուելի գալը նրանք չունեին երկրորդական օրենքներ, կանոնադրություն:
 2. Սամուելը ժողովրդին սովորեցնում էր երկրի վրա Աստծու թագավորությունը կիրարկելու երկրորդական օրենքները, կանոնադրությունը, կիրարկությունը, սովորույթները, վարվելակերպերը, հրամանագրերը և կանոնները:
- VI. **Աստված նոր դարաշրջան սկսեց՝ բարձրացնելով Սամուելին՝ մի երիտասարդ ուխտավորի, որպես հավատարիմ քահանայի, որը փոխարինեց դեգրադացված քահանայությանը՝ 2:35.**
- Ա. Սամուելը հաստատվեց Աստծու կողմից, որպեսզի խոսի Աստծու խոսքը և փոխարինի հին քահանայության կողմից Աստծու խոսքի ուսուցմանը. քահանայության մեջ առաջին քանը, որ քահանան պետք է անի, Աստծու համար խոսելն է:
- Բ. Լանջապանակը և Ուրիմն ու Թումիմը, որոնք կրում էր քահանայապետը, այն միջոցներն էին, որոնք Աստված օգտագործում էր Իր ժողովրդի հետ խոսելու համար (Ելց 28:30). քահանայության դեգրադացման մեջ Աստծու խոսելը գրեթե կորած էր՝ Ա Թգ 3:1, 3ա:

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

- Գ. Աստված Իր խոսքն Իր ընտրյալներին էր սպասավորում՝ հաստատելով Սամուելին՝ որպես բարձրացված մարգարեների ընդհանրության մեջ եղող մարգարեի (իսխ. 20:21), և Նա Իր ընտրյալների վրա գործադրում էր Իր իշխանությունը՝ բարձրացնելով Սամուելին՝ որպես դատավորի՝ 7:15-17:
- Դ. Սամուելը՝ որպես վերջին դատավոր, վերջ դրեց դատավորների ծառայությանը և որպես նոր քահանան՝ բերեց քազավորումը, որն ամրապնդվում էր բարձրացված մարգարեների ընդհանրությամբ:
- Ե. Աստված կենդանի մարդու՝ մարգարեի բարձրացնելու կարիք ուներ, ով կխոսեր Իր անունից. Աստծու սահմանածով՝ Սամուելը համարվում էր առաջին մարգարեն, քանի որ նրանից սկսվեց մարգարեների ծառայությունը՝ Աստծու խոսելու համար՝ Գրծ 3:24, 13:20, Եբր 11:32:
- VII. Սամուելը երկրի վրա մեկ էր Աստծու հետ. որպես երկրի վրա Աստծու պաշտոնակատար, երկնքում եղող բուն Աստծու ներկայացուցիչը երկրի վրա Նրա ժողովրդին կառավարելու համար՝ Սամուելը հինգ կարգավիճակով էր ծառայում՝ Ա Թգ 7:3.**
- Ա. Սամուելը սպասավորում էր որպես ուխտավոր՝ բացարձակապես Աստծուն Իր տնտեսությունն իրազործելու համար նվիրաբերված՝ 1:11, 28ա:
- Բ. Սամուելը սպասավորում էր որպես Աստծուն պատվող, Աստծուն հաճեցնող քահանա, որով փոխարիմեց հնացած և դեզրադացված քահանայությանը, և նա հավատարիմ կերպով գործեց Աստծու անունից նույնիսկ երկրի վրա աստվածային կառավարման համար թագավորներ նշանակելու և հաստատելու գործում՝ 2:30, 35–36, 7:3-17, Դտվ 9:9, 13:
- Գ. Սամուելը սպասավորում էր որպես Աստծու կողմից հաստատված մարգարե (Ա Թգ 3:20), որպեսզի Աստծու խոսքը խոսեր և փոխարիմներ իին քահանայության ուսմունքին այն ժամանակ, երբ Եհովայի խոսքը հազվադեպ էր և տեսիլքները տարածված չէին (իսխ. 1-10, 19-21):
- Դ. Սամուելը թագավորության իրականության մեջ սպասավորում էր որպես դատավոր, որպեսզի փոխարիմներ իին ու հնացած քահանայությամբ մարդկանց դատելուն՝ 7:15-17:
- Ե. Սամուելը սպասավորում էր որպես աղոթքի մարդ, ով աղոթում էր Աստծու ընտրյալների համար, որպեսզի նրանք Աստծու ճանապարհի վրա պահվեին, Աստծու հետ մեկ լինեին, ազգերի կուտքերի թակարդը չընկնեին և վայելեին Աստծուն որպես Արենեզերի (նշանակում է «օգնության քարը»՝ իս. 12), որպեսզի Աստծու կամքում եղող Նրա ցանկությունը նրանց առնչությամբ իրազործվեր՝ իսխ. 3-17, 8:6, 12:19-25, 15:11բ: